I

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ (V դ. կես – 630-ական թվականներ)

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև Հայաստանի 387 թ. բաժանումից հետո պահպանվեց Հայոց պետականության հիմնախարիսխը՝ նախարարական համակարգը: Վերջինիս հիմքի վրա գոյատևեց Արշակունիների Հայոց թագավորությունը՝ կարճ ժամանակամիջոցում (մինչև 389 թ.) հռոմեական, իսկ 387–428 թթ.՝ պարսից բաժիններում: Պարսկաստանին անցած մասում Հայոց թագավորությունը պահպանվեց հայ նախարարների կամքով, ինչը հաշվի առավ Սասանյան արքան: Նաև հայ նախարարների ցանկությամբ 428 թ. գահընկեց արվեց Հայոց վերջին Արշակունի թագավոր Արտաշեսը: Սակայն դա բնավ չէր նշանակում, թե Հայաստանը զրկվում է իր պետականությունից, քանի որ երկրում իշխում էին հայ նախարարներն իրենց հողատիրույթներով, ռազմական ուժով, իրավազոր կառույցներով: Ուստի, Եղիշե պատմիչը գրում է, որ Հայոց վերջին Արշակունի թագավոր Արտաշեսի գահընկեցությունից հետո «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն»[1]: Շնորհիվ նախարարական պետականության՝ Հայաստանը մնաց աննվաճ և չվերածվեց Պարսկաստանի սովորական մարզի: Զուր անցան այդ պետության տիրակալների տենդագին ջանքերը՝ Հայաստանը թուլացնելու, ռազմուժից և դիմադրողականությունից զրկելու ուղղությամբ: Այդ նպատակին էր ծառայում Հայոց նախարարներին իրենց զինուժով երկրից դուրս հանելը և օտար երկրներում մարտադաշտեր նետելը:

Սասանյան Հազկերտ II արքան (439–457) Հայաստանի ինքնավար իրավունքները վերացնելու համար դիմում է արմատական միջոցների: Եղիշեի հավաստմամբ, «առաւել ընդ Հայոց աշխարհին մարտնչէր... մանաւանդ որք էին՝ յազգէ նախարարացն Հայոց»[2]: Հենց նախարարական զորագնդերն էին 450–451 թթ. Հայաստանում ծավալված ժողովրդաազատագրական պատերազմի հիմնական ուժերը, որոնք ի մահ կանգնեցին ու հերոսական մահվամբ նահատակվեցին[3]:

---

[1] *Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (այսուհետև՝ Ե ղ ի շ է), աշխատութ. Ե. Տէր-Մինասյանի, Երևան, 1957, էջ 6: Հավանաբար, Արտաշեսը պահվել է պարսից արքունիքում, որտեղ և վախճանվել է (Ա. Գ ա ր ա գ ա շ է ա ն. Քննական պատմութիւն Հայոց, մասն Դ, Թիֆլիս, 1895, էջ 19):*

[2] *Ե ղ ի շ է, էջ 6:*

[3] *Մի ենթադրության համաձայն, իբր Ավարայրի ճակատամարտից առաջ Արծրունի նախարարների զորաբաժինը խուսափելով մարտից, դիմել է փախուստի (տե՛ս Հ. Ք. Ա ր մ ե ն.*

Ավարայրի ճակատամարտից հետո հայ նախարարները ամրանալով Կորճայքի Տմորիք, Ճորոխ գետի ավազանում տարածվող Խաղտիք (Ճանիվ) դժվարամատույց գավառներում, Տայոց և Արցախի բերդերում՝ շարունակել են հերոսական մաքառումները: Հայաստանի նոր մարզպան Ատրորմիզդ Արշականը երկյուղով էր համակված, քանի որ □բազումք ի նախարարացն Հայոց դեռևս բռնացեալ ունէին զամուրս աշխարհին□[4]: Երկյուղելով նոր ընդվզումներից՝ Հազկերտ II արքան կալանակյաց 35 հայ նախարարներին թույլ չտվեց վերադառնալ հայրենիք, գերադասելով նրանց զորուժը նետել քուշանաց ցեղերի դեմ, որոնք հարաժամյա հարձակումներով սպառնում էին նրա թագավորությանը:

Հազկերտն իր գահակալման 17-րդ տարում ազատ է արձակում Վարդան զորավարի եղբոր՝ 451 թ. պարսիկների դեմ մղված մարտում զոհված Հմայակ Մամիկոնյանի կորյուններին՝ Վահանին, Վասակին և Արտաշեսին, հուսալով այդ կերպ շահել նրանց հավատարմությունը:

Հայաստանի նախարարական համակարգը կազմալուծելու, նախարարներին իր ազդեցության տակ գցելու նպատակով արյաց արքունիքը ուրացության դիմած հայ ազատներին առաջ է քաշում՝ նրանց շնորհելով տոհմապետի (տանուտերի) իրավունքներ և այլ առանձնաշնորհումներ: Հազկերտն այդպիսի միջոցներով հույս ուներ Հայաստանը զրկել պետական կենսունակությունից, նախարարներին դարձնել հլու կամակատարներ, հավատափոխել և ձուլել հայ ժողովրդին՝ վերացնելով նրա միասնության ու հոգևոր համագոյության գորեղ կռվանը՝ Հայոց Առաքելադրոշմ Եկեղեցին: Հայրենասեր ուժերն ի դեմս Մամիկոնյանների, Կամսարականների, Սյունի, Ամատունի և նախարարական ուրիշ տների, համախմբվում են Գյուտ Արահեզացի կաթողիկոսի շուրջը, որը հայրապետ էր ընտրվել առանց Պերոզ արքայի գիտության, նախարարների և հոգևոր դասի կողմից: Նա, ինչպես վկայված է Հովհաննես Դրասխանակերտցու «Շարից հայրապետացն Հայոց» գրվածքում[5], հայ նախարարների հորդորով իր Աթոռը հաստատում է Դվին քաղաքում[6], որը միջնադարյան Հայաստանի վարչաքաղաքական բաբախուն կենտրոնն էր և նրա ինքնուրույնության խորհրդանիշը:

Հայրենասեր ազատանու գործունեությունը հարուցում է սասանյան դրան դժգոհությունը: Պերոզի հրամանով Գյուտն աթոռազրկվում է, հալածանքներ

Մարզպանը և սպարապետը, Լոս Անձելես, 1952, էջ 243): Մինչդեռ ժամանակակից Եղիշե պատմիչի վկայությամբ Ավարայրի ճակատամարտում զոհված 1036 հայ ռազմիկների մեջ էին նաև նախարարներ □ի տանէն Արծրունեաց□ (Ե ղ ի շ ե, էջ 120): Անշուշտ, իրական անձ չէ Վահան Արծրունին, որը, ըստ Թովմա Արծրունու, եղել է Վարդան Մամիկոնյանի զինակիցը և ընկել Ավարայրի մարտում (տե՛ս Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխատասիրութ. Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 2006, էջ 91): Ի դեմս Վահան Արծրունու՝ Թովմա Արծրունին կամեցել է բարձրացնել իր տոհմի վարկը (տե՛ս M. B r o s s e t. Notice sur l historien Armenien Thoma Ardzrouni X-es.– “Melanges Asiatiques”, IV, St. Petersbourg, 1862, p. 698*):*

[4] *Ե ղ ի շ ե, էջ 130:*

[5] *Զետեղված է Սամվել Անեցու «Ժամանակագրության» վերջում՝ ծանոթագրությունների բաժնում [տե՛ս Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս, աշխատութ. Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, էջ 272–277]:*

[6] *Նույն տեղում, էջ 274:*

են ծավալվում նրա կողմնակից նախարարների, հատկապես Մամիկոնյանների դեմ, հովանավորվում են հավատուրաց ազատները: Փաստորեն, կրկնվում է Մասանյանների անհանդուրժելի գործելաոճը: Երկրում վերստին դժգոհություն է առաջանում, և այդ հիմքի վրա 482 թ. բռնկվում է ազատագրական նոր պատերազմ՝ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ: Ապստամբները պարսից զորքերի դեմ փայլուն հաղթանակներ են տանում Ակռոի և Ներսեհապատ գյուղերի մոտ մղած կռիվներում[7]: Պերոզին հաջորդած Վաղարշ արքան, հաշվի առնելով հայ նախարարների դիրքն ու զորությունը, հաշտության առաջարկով դիմում է Վահան Մամիկոնյանին: Դրանով իսկ նա հայ նախարարներին դիտում էր որպես ինքնուրույն ու պետականորեն զորեղ կողմի: Նվարսակ գյուղում 484 թ. կնքված հայ-պարսկական դաշնադրությամբ սասանյան դուռը ճանաչում էր նախարարների ինքնավար իրավունքները: Պարսկական կողմի հետ ընթացող բանակցությունների ժամանակ Վահան Մամիկոնյանը պահանջում է՝ «զհայրենի և զբնիկ օրէնս մեր ի մեզ թողուք»[8]: Դրանով իսկ Հայաստանում շարունակվելու էր գործադրվել կանոնական ուժ ստացած սովորութային իրավունքը և քրիստոնեությամբ նվիրագործված օրինադրությունը: Վահանը կարողանում է արյաց արքային ճանաչել տալ հայ նախարարների խաթարված գահակարգը և դրա գրավոր վավերացումը՝ Գահնամակը[9]: Երբ Վահանն ուխտակից նախարարների հետ մեկնում է արյաց դուռ, Վաղարշ արքան նրան հավաստիացնում է, որ կատարելու է «գրով և կնքով» նրա բոլոր պահանջները՝ «այսօր մինչև ցյաւիտեանս»[10]: Նվարսակի պայմանագրով հայերն ազատորեն դավանելու էին քրիստոնեական կրոնը, որը նաև երկրի միասնության, ինքնուրույնության զորավոր կռվանն էր և ուներ նաև քաղաքական մեծ ներուժ, քանի որ հայերին զերծ էր պահում պարսից տիրապետող կրոնից ու նրանով սրբազնագործված իրավահարաբերություններից և ձուլման վտանգից: Այն էականորեն նպաստում էր նաև երկրի ազգային դիմագծի պահպանմանը:

Այդպիսով՝ ավելի քան քառորդ դար տևած մաքառումների շնորհիվ հայ նախարարներն անցնելով բազում փորձությունների բովով, դուրս եկան հաղթանակով և, ավելի համախմբված ու զորացած, պահպանեցին իրենց կալվածքներն ու իշխանությունը և այդ հիմքի վրա՝ երկրի անկախ գոյավիճակը, քրիստոնեական իրավակեցությունն ու ազգային մշակույթը: Հաշվի առնելով հայ ազատանու զորությունն ու ժողովրդի միասնությունը՝ սասանյան արքունիքը 485 թ. Վահան Մամիկոնյանին ճանաչում է Հայաստանի մարզպան: Ավելի են ընդլայնվում ու ամրապնդվում Հայոց պետականության դարավոր հիմքերը: Նույնը շարունակվեց նաև Վահանին հաջորդած եղբոր՝ Վարդի օրոք

---

[7] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութ. Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 123–124, 128–130 (այսուհետև՝ Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի): Ղազար Փարպեցին իր հովանավոր Վահան Մամիկոնյանին բարձրացնելու միտումով Ակռոիում մղած մարտի ժամանակ հայոց զորքի թվաքանակ է նշում 400 հոգի (նույն տեղում, էջ 124), մինչդեռ ըստ Սեբեոս պատմիչի, պարսից զորքի դեմ պատերազմում է Վահան Մամիկոնյանը՝ «Լ(30) հազարաւ ընտիր վառելոց...» (տե՛ս Պատմութիւն Սեբէոսի (այսուհետև՝ Ս ե բ է ո ս), աշխատասիրութ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 66:*

[8] *Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 161:*

[9] *Նույն տեղում, էջ 175–176:*

[10] *Նույն տեղում, էջ 174:*

(505–509 թթ.)[11]*: 506 թ. Դվինում Բաբգեն կաթողիկոսի հրավիրած ժողովին մասնակցում էին նաև Վարդ մարզպանը, Կամսարական, Բագրատունի, Ամատունի, Խորխոռունի, Պալունի, Սյունյաց, Ռշտունի և այլ նախարարներ*[12]*: - Ժողովում նզովվում է նեստորականությունը՝ հավատարիմ մնալով Նիկիայի 325 թ. առաջին ու Եփեսոսի 431 թ. տիեզերաժողովների հաստատած հավատո դավանությանը*[13]*: Ժողովական թուղթն իրենց կնքամատանիներով հաստատում են Բաբգեն կաթողիկոսը, մարզպան Վարդ Մամիկոնյանը և նախարարները*[14]*: Այդպիսով հայ ազնվականության աշխարհիկ և հոգևոր թևերը միակամորեն հանդես են գալիս Հայաստանի հոգևոր ինքնուրույնության համար մղվող պայքարում: Հայոց եկեղեցին զորանում էր պետական իշխանությամբ օժտված նախարարությունների համադաշն գործակցությամբ ու զորակցությամբ: Այդ դաշինքը շատ էր բարձրացնում Հայոց եկեղեցու հեղինակությունը հարևան եկեղեցիների ու ժողովուրդների մեջ: Մարզպանի, նախարարների ու հոգևոր դասի համագործակցությունը վկայված է նաև Բաբգեն կաթողիկոսի, Վարդ մարզպանի և մի քանի նախարարների ու եպիսկոպոսների կողմից Պարսկաստանի ուղղափառ (միաբնակ) քրիստոնյաներին ուղղած ոչ ժողովական թղթում, որտեղ մերժվում է նեստորականությունը և արիոսականությունը*[15]*:*

Նախարարների կողմից եկեղեցուն սատարելու շնորհիվ վերջինս պահպանեց և ավելի ընդլայնեց իր դավանական ինքնորոշումը: Այդուհետև մինչև VII դ. կեսերը Հայաստանը օժտված էր մնում ինքնավար իրավունքներով[16]*, որոնք արյաց դուռը փորձում է խախտել Կավատ I արքայի (488–531) օրոք՝ 490 թ.: Ինչպես հաղորդում է VI դ. ասորի մատենագիր Յոշվա Ստիլիտը (Սյունակյաց) իր «Ժամանակագրության» մեջ, հայերը «միավորվելով քանդեցին այն ատրուշանները, որոնք պարսիկները կառուցել էին իրենց երկրում և կոտորեցին իրենց մոտ եղած մոգերին: Կավատը նրանց դեմ ուղարկեց մի մարզպանի՝ իր բանակով, որպեսզի նա պատժի և կրակապաշտ դարձնի, բայց հայերը կռվեցին նրա դեմ և ջախջախեցին նրան ու նրա զորքը, և ապա դեսպաններ ուղարկեցին կայսրին և հայտնեցին, որ ուզում են նրա գերիշխանությանը ենթարկվել: Սակայն նա չցանկացավ ընդունել նրանց ...»*[17]*: Բյուզանդիայի դեմ 502 թ. Կավատի սկսած պատերազմի ժամանակ, ինչպես վկայում է նույն հեղինակը, հայերը նորից են անհնազանդություն ցուցաբերում սասանյան տիրակալի նկատմամբ: Վերջինս թեև «շատ ավելի ուժեղ էր, քան նրանք (հայերը), սակայն չնվաճեց նրանց, այլ խոստացավ, որ չի ստիպի կրակապաշտությունն ընդունել, եթե նրանք իրեն օգնեն հոռոմների դեմ պատերազմում: Նրանք վախից ակամա համաձայնվեցին»*[18]*: Այդպիսով Կավատ արքան, հաշ-*

---

[11] *Ըստ Մեբեռսի՝ □Յետ Վահանայ կալաւ զիշխանութիւնն Վարդ Պատրիկ եղբայրն նորա սակաւ ինչ ժամանակ, և մեռաւ: Զկնի նորա եկին մարզպան պարսիկք□ (Ս ե բ ե ռ ս, էջ 67):*

[12] *Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 42:*

[13] *Նույն տեղում, էջ 44–46:*

[14] *Նույն տեղում, էջ 47:*

[15] *Նույն տեղում, էջ 48–50:*

[16] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Դ, Երևան, 1981, էջ 416:*

[17] *Ասորական աղբյուրներ, Ա, աշխատասիրութ. Հ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 162:*

[18] *Նույն տեղում, էջ 164:*

վի առնելով հայ նախարարների զորությունը, ճանաչել է նրանց ինքնավար իրավունքները, կամենալով նրանց ուժերն օգտագործել պատերազմներում: Հաջորդ տարի՝ 503 թ. հոկտեմբերին, Կավատի զորքերն ասպատակում են Հայաստանի բյուզանդական բաժինը՝ Ծոփքը և այլ շրջաններ[19]: Հայ նախարարների ուժերը զորակցում են պարսիկներին, որոնք պարտության մատնելով բյուզանդական զորամասերը, գրավում են Սամոսատ քաղաքը և այլ բնակավայրեր:

Կավատ արքան իր գահակալման վերջին տարում (531 թ.) թեթևացնում է երկրի հարկային բեռը[20]: Բայց դժվար է ասել, թե այդ որոշումը որքանով է կիրառվել Հայաստանում: Կավատին հաջորդած Խոսրով I Անուշիրվանը (531–579) ծանրացնում է հարկերը, որոնք գանձվում էին տարին երեք անգամ՝ հողահարկի և գլխահարկի ձևով[21]:

Հայաստանը, նրա նախարարական զորամասերը 505 թ. օգնում էին բյուզանդացիներին, հարուցելով պարսկական կողմի թշնամանքը: Բայց նույն թ. բյուզանդական զորքը ներխուժում է Հայաստանի պարսկական բաժին, կոտորում 10 հազար հայերի ու պարսիկների, գերեվարում 30 հազար խաղաղ բնակիչների: Մուշեղ Մամիկոնյանը (Մուշլեկ), «որը պարսիկների գերիշխանության ներքո էր, իր ամբողջ ուժով (զորքով) հանձնվեց և դարձավ հոռոմների հպատակ»[22]:

541 թ. նույնպես բյուզանդական զորքերը ներխուժում են Հայաստանի պարսկական գավառներ, մատնում ավարառության՝ «գերեվարելով բազմաթիվ հայերի»[23]:

571 թ. Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ հայ նախարարներն ապստամբում են և իրենց 20 հազարանոց բանակով ջախջախում Դվին մտած պարսից 15 հազարանոց զորքին, սպանելով Սուրեն մարզպանին[24]:

Սեբեոսի վկայությամբ՝ Վարդան Մամիկոնյանն «ի բաց եկաց ի ծառայութենէ թագաւորութեանն Պարսից հանդերձ միաբանութեամբ ամենայն Հայաստանեաւք»[25]: Հայերի ապստամբությունից օգտվելով՝ Բյուզանդիայի Հուստինոս II կայսրը, ելնելով պետության շահերից, զորքերը շարժում է պարսիկնե-

---

[19] *Նույն տեղում, էջ 184, 190–191:*

[20] Chronique de Abou Djafar Mohamed-ben-Djarir-ben Jezid Tabari. Par H. Zottenberg, t. II, Paris, 1958, p. 152.

[21] Н. П и г у л е в с к а я. К вопросу о податной реформе Хосроя Ануширвана– «Вестник древней истории». М., 1937, № 1, с. 146–147.

[22] *Ասորական աղբյուրներ, Ա, էջ 203:*

[23] *Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանութ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 29: Հայ նախարարների հանդեպ կայսրության անվստահությունը շարունակվում է անգամ այն ժամանակ, երբ հայերը միանում են Հայաստան արշավող կայսեր զորքերին (նույն տեղում, էջ 30): Հայ զորականներին թույլ չի տրվում մնալ հայրենիքում, այլ Բելիսարիոսի գլխավորած բանակի կազմում ուղարկվում են Իտալական ռազմաբեմ՝ գոթերի դեմ պատերազմելու, որի ընթացքում հայերը, նույն պատմագրի վկայությամբ՝ □հոյակապ սխրագործություններ կատարեցին□՝ փախուստի մատնելով հակառակորդին: Բայց նրանց խիզախ զորապետ Արտավազդ Մամիկոնյանի զոհվելուց հետո բյուզանդական զորքը լքում է մարտադաշտը (նույն տեղում, էջ 225, 227):*

[24] *Հ ո վ հ ա ն Ե փ ե ս ա ց ի. Եկեղեցական պատմություն.– Ասորական աղբյուրներ, Ա, էջ 389–390: Տե՛ս նաև Ս ե բ է ո ս, էջ 67:*

[25] *Ս ե բ է ո ս, էջ 67:*

րի դեմ: Որոշ ընդհատումներով մոտ քսան տարի տևած պատերազմի ընթացքում թեև Հայաստանը բազմիցս մատնվեց ավերածության, սակայն չկորցրեց իր ռազմի կորովը և ապացուցեց, «թե ո՛րքան կենսունակ էր հայ ժողովուրդը»[26]*: Երկարատև պատերազմները քամում էին երկրի հյութերը, կրճատում բնակչության թիվը, սակայն չէին կոտրում ժողովրդի կենսունակ ոգին, քանզի երկրում պահպանվում էր ազգային-պետական և ավանդաբար հարատևվող համակարգը, որի հիմքը նախարարական խոշոր հողատիրությունն էր՝ կիսանկախ իշխանություններով ու սովորութային իրավանորմերի վրա հենված իրավակեցությամբ: Յուրաքանչյուր գավառի գերակա իրավատերը նրա հողատեր-նախարարն էր՝ իր զինուժով, վարչական, դատական իրավազորությամբ: Երկրի առջև ծառացած հրատապ խնդիրները լուծվում էին համերկրային ժողովներում՝ նախարարների գործուն մասնակցությամբ ու աջակցությամբ:*

Հայ նախարարների ռազմաքաղաքական ազդեցությունը հաճախ իրեն զգալ էր տալիս նաև Սասանյան պետության համար բախտորոշ նշանակություն ունեցող իրադարձությունների պահերին: VI դ. վերջերին շարունակվող պարսկա-բյուզանդական պատերազմի ժամանակ 589 թվականին պարսից զորավար Վահրամ Չուբինը ջախջախում է բյուզանդական զորքերին, դառնում նաև Խոսրով Փարվեզի վտանգավոր ախոյանը[27]*: Նրանց միջև մղվող պայքարում հրատապ նշանակություն ուներ հայ նախարարների դիրքորոշումը: Վահրամ Չուբինը եղել էր Հայաստանում*[28]*, անշուշտ, ծանոթ էր հայ նախարարներին: Նա առանց վարանելու դիմում է նրանց՝ առաջարկելով միասնաբար տապալել սասանյան արքային՝ խոստանալով վերականգնել Հայոց Արշակունիների թագավորությունը*[29]*: Անշուշտ, Վահրամ Չուբինը, որպես Միհրանյան (Արշակունի), կամենում էր վերականգնել պարթև և հայ Արշակունիների թագավորությունները*[30]*: Նա դիմում է նաև Բյուզանդիայի Մորիկ (Մավրիկիոս) կայսեր՝ հորդորելով հրաժարվել Խոսրով Փարվեզին զորակցելուց*[31]*: 589 թ. Խոսրով II Մորիկին խոստանում էր նաև Հայաստանը, այն դեպքում, երբ Չուբինը կայսեր զիջելու էր սոսկ Միջագետքը*[32]*: IX դարի պարսիկ մատենագիր Աբու Հանիֆա ադ-Դինավարիի վկայությամբ հայ նախարարներն սկզբում հարել են Վահրամ Չուբինին, սակայն երբ Մորիկ կայսրը զորակից է եղել Խոսրով Փարվեզին, նրանք հեռացել են Տիզբոնին արդեն տիրացած Չուբինից: Նախարարների հետ էր նաև Մուշեղ Մամիկոնյանը, որը 20 հազա-*

---

[26] *Լ. Ե ռ. Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1967, էջ 213–214: Պատերազմը հիմնականում մղվում էր Հայաստանի պարսկական մասում, որտեղ 577 թ. պարսից զորքերը բազմաթիվ հաղթանակներ տարան բյուզանդացիների դեմ (տե՛ս* E. H o n i g m a n n, Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071. Bruxelles, 1935, S. 22)*: Սակայն հետագայում դեպքերն այլ կերպ դասավորվեցին՝ հանգեցնելով Հայաստանի 591 թ. բաժանմանը:*

[27] *Ս ե բ է ո ս, էջ 74:*

[28] Ф е о ф и л а к т С и м о к а т т а. История. М., 1957, с. 94.

[29] *Ս ե բ է ո ս, էջ 77, Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն, էջ 98–99:*

[30] A. C h r i s t e n s e n. L'Iran sous les Sassanides, Copenhague, Paris, 1936, p. 439.

[31] Ф е о ф и л а к т С и м о к а т т а. *Նշվ. աշխ., էջ 113:*

[32] *Նույն տեղում, էջ 112:*

բանց զորախմբով զորակցում է Խոսրով II-ին[33]: Այսպիսով՝ հայ նախարարները, սթափ գնահատելով ուժերի իրական հարաբերակցությունը, հրաժարվում են Վահրամ Չուբինին դաշնակցելուց, երբ արդեն բյուզանդական զորագնդերը նետվում են Տիգրիսի ձախակողմյան վտակ Մեծ Զավ գետի հովտում բանակած նրա զորքի դեմ: Մորիկը գերադասում է արշավել Հայաստանով, որպեսզի կասեցնի այնտեղ Չուբինի զորքի թափանցելը և պատերազմի հաղթական ելքից հետո Խոսրով Փարվեզին ստիպի կատարելու 591-ին կնքված համաձայնությունը, որով, ինչպես հայտնի է, Հայաստանի պարսից բաժնի մեծ մասն անցնելու էր կայսրությանը: Բացի այդ, կայսրը, հավանաբար, երկյուղում էր, որ հայ նախարարները կարող են միանալ Չուբինին: Ընդ որում՝ Հայոց Արշակունիների թագավորությունը Չուբինի կողմից վերականգնելը ձեռնտու չէր կայսրությանը[34]: Վերջինիս կողմից Հայաստանը գրավելու հետևանքով ավելի էին դժվարանում հայ նախարարներին իր կողմը գրավելու Չուբինի փորձերը: Եվ հայ նախարարներն իրենց զորագնդերով մասնակցում են նրա դեմ կայսրության և Խոսրով II միացյալ զորքերի վարած մարտերին[35]: Նշենք նաև, որ հայ նախարարներն իրենց զորուժով Խոսրով II կողմում մասնակցեցին նաև վերջինիս քեռու՝ Խորասանի կառավարիչ Վստամի գլխավորած ապստամբների դեմ մղված կռիվներին[36], որոնց ելքը կարող էր ճակատագրական լինել արյաց արքայի համար, քանի որ Վստամն իրեն հռչակելով թագավոր[37], սպառնում էր գահընկեց անել նրան:

591 թ. Հայաստանի երկրորդ բաժանումից դժգոհ էին թե՛ հայերը և թե՛ պարսիկները, քանի որ այն էականորեն թուլացնում էր նրանց դիրքերը ու զորացնում կայսրությունը: Խոսրով Փարվեզը ընդհուպ մինչև 596 թվականը, ի զորու չեղավ ճնշել Վստամի ապստամբությունը[38]: Հավանաբար, այդ տարիներին ևս հայ նախարարները զորավիգում են Խոսրով II, որը սակայն, հետևում է նրանց իրենց զինուժով Հայաստանից դուրս հանելու մորիկյան դավադիր քաղաքականությանը՝ հայկական զորամասերը նետելով քուշանների դեմ պատերազմելու[39]: Փաստորեն, 591 թ. բյուզանդա-պարսկական դաշնագիրն ուղղված էր նաև Հայաստանի նախարարների՝ իբրև անհնազանդ տարրի դեմ: Եվ Մորիկն ու Խոսրով Փարվեզը փոխադարձ պայմանավորվածությամբ շարունակում են հայ նախարարներին հանել իրենց բնօրրանից և նետել օտար երկրներ՝ պատերազմելու իրենց խորթ շահերի համար: Պարսից մերձկասպյան Վրկան մարզի դեմ հայոց զորքով ուղարկված Սմբատ Բագրատունին հնազանդեցնում է խռովարար ուժերին և 600 թ. կարգվում այդ երկրա-

---

[33] Абу Ханифа ад-Динавари. Книги длинных известий.– «Палестинский сборник», вып. 22 (85). Л., 1970, с. 123–124. Տե՛ս նաև G. Garitte. La narratio de rebus Armeniae. Edition critique et commentaire. Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 132, subsidia, t. 4, Louvain, 1952, p. 39.

[34] Э. Даниелян. Армяно-византийские отношения (конец VI–первая половина VII в.).– ИФЖ, 1988, № 3, с. 69.

[35] Th. Nöldeke. Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, S. 123.

[36] *Սեբեոս, էջ 97–98: Տե՛ս նաև* А. Колесников. Иран в начале VII века.– «Палестинский сборник», вып. 22 (85), с. 68.

[37] A. Christensen. *Նշվ. աշխ., էջ 441 :*

[38] Th. NΦldeke. *Նշվ. աշխ., էջ 124 :*

[39] *Սեբեոս, էջ 101:*

մասի մարզպան[40]*: Խոսրով Փարվեզը փորձում է իր կողմը գրավել նաև Մուշեղ Մամիկոնյանին: Սակայն Մորիկը կարողացավ կանխել դա՝ Մուշեղին հրավիրելով կայսերական պալատ: Դավին անտեղյակ, Մուշեղն անսաց կայսրին և մեկնեց նրա մոտ, սակայն «այլ ևս ոչ ետես զերկիրն»*[41]*: Իհարկե, դա ևս չփարատեց կայսեր տագնապը՝ հայ նախարարների անհավատարմության առնչությամբ: Եվ Մորիկը հրաման է արձակում, որպեսզի կայսրությանն անցած հայկական նահանգների նախարարները «ժողովեսցեն զամենեսեան» և ուղարկվեն Թրակիա՝ Բյուզանդիայի թշնամիների դեմ պատերազմելու: Քանի որ դեռևս 536 թ. մարտի 18-ին Հուստինիանոս I կայսեր հրապարակած 31-րդ հրովարտակով կայսրությանն անցած հայկական գավառներում իշխող նախարաները կորցրել էին իրենց ինքնուրույնությունը*[42]*, ուստի Մորիկ կայսրն առանձին երկյուղ չուներ նրանց նկատմամբ:*

Խոսրով Փարվեզը ևս շարունակում էր չվստահել հայ նախարարներին, երկյուղելով, որ նրանք կարող են միանալ բյուզանդական հատվածի հայ ազատանուն: Դրա կանխելուն էր նպատակաուղղված նախարարների մոտ արյաց դռան կողմից «արքունի համարակարին» ուղարկելը: Վերջինս տնօրինում էր արքունի հասույթների ելևմտակարգը, ինչպես նաև թագավորական տան անդամներին պատկանող կալվածներից գանձվող հարկերը[43]*: Համարակարը պետք է գանձեր, նաև պատիվներ շնորհեր հայ նախարարներին: Սեբեոսը գրում է, որ «հանդերձ գանձու բազմաւ և մեծամեծ պատուովք» նախարարների մոտ ժամանած համարակարը նպատակադրվել էր հայ նախարարներին առնչակցել «ի ծառայութիւն իւր»*[44]*: Ինչպես նշվել է, 591 թ. հետո Բյուզանդիային անցած հայկական գավառներից շատ հայ նախարարներ, չհանդուրժելով Մորիկի վարած քաղաքականությունը, անցել էին պարսկական բաժին՝ զրկվելով իրենց հողատիրույթներից: Ստեղծված իրավիճակում թուլացած Պարսկաստանի համար հայ նախարարները վտանգավոր ուժ էին դարձել, ուստի անհրաժեշտ էր նրանց որևէ ձևով կապել արյաց դռան հետ՝ հաշվի առնելով ստեղծված նոր կացությունից նախարարների դժգոհությունը: Վերջիններիս պարագլուխներն էին Մամիկոնյան, Ամատունի, Սյունի, Վահևունի, Խորխոռունի և Տրպատունի նախարարները, որոնք երկու հազարանոց զորամասով շարժվում են Ատրպատականի սահմանագլուխ՝ համարակարին դիմավորելու և գանձերը խլելու դիտավորությամբ: Ըստ Սեբեոսի՝ նախարարները հույս ունեին այդ գանձերով կաշառել հոներին և նրանց զորքի օգնությամբ «զերկիրդ մեր ի մեզ դարձուացուք»: Գանձերին տիրանալուց հետո նախարարները Նախճավանում դրանք բաժանում են միմյանց միջև, ապա բանակում ճահուկ անունով շամբում*[45]*:*

---

[40] «Палестинский сборник», вып. 22 (85), с. 70.

[41] *Սեբեոս, էջ 84:*

[42] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя. СПб., 1908, с. 134.

[43] А. Перихаян. Сасанидский Судебник. Книга тысячи судебных решений. Ереван, 1973, с. 389–390.

[44] *Սեբեոս, էջ 87:*

[45] *Նույն տեղում:*

Նախարարների հնարավոր ընդվզումը կանխելու համար Խոսրով II 591 թ. դիմեց Մորիկ կայսրին՝ խնդրելով օգնական զորք ուղարկել նախարարների դեմ (որոնց մի մասը ինչպես նշվեց, բյուզանդական բաժնից էին): Մորիկը չհապաղեց և օգնական զորք ուղարկեց հայ նախարարների դեմ: Վերջիններս, անհեռանկար համարելով երկու պետությունների միացյալ ուժերի դեմ առճակատումը, դիմեցին հաշտության եզրերի և, համաձայնվելով համարակարի առաջարկներին, «դարձան անդրէն յերկիրն իւրեանց»[46]*: Հավանաբար, ովքեր բյուզանդական հատվածից էին, Մորիկի պահանջով վերադարձան այնտեղ: Վերջինս ավելի խստացրեց նախարարների հանդեպ իր վարած քաղաքականությունը՝ հարուցելով նրանց անվստահությունը: Ընդ որում՝ Խորխոռունի և Վահևունի նախարարները «զաւրաւքն իւրեանց» հեռանալով Քուռ գետի ափերը, Մորիկ կայսրից «երդումն խնդրեալ ... գնացին ի ծառայութիւն նորա»*[47]*: - Սակայն կայսրը Խորխոռունի իշխանին հրավիրում է իր մոտ և հայկական զորաբաժնով նետում Թրակիա՝ պատերազմելու կայսրության թշնամիների դեմ: Մորիկը կամենում էր նույն կերպ վարվել նաև իր բաժնի մյուս նախարարների հետ: Բայց վերջիններս (Վահևունիները, Տրպատունիները և ուրիշներ), դժգոհելով կայսեր նենգադրուժ վերաբերմունքից, ծառանում են նրա դեմ և, Կարին գավառում ձեռք բերելով «աւար բազում», հեռանում Կորդուք գավառի կողմերը: Սակայն նրանց հետապնդող բյուզանդական զորամասերը Հերակլ զորապետի և Համազասպ Մամիկոնյանի գլխավորությամբ պարտության են մատնում նախարարներին: Վերջիններից երեքը զոհվեցին, մի քանիսն էլ գերի ընկան և գլխատվեցին: Փախստական դարձած Թեոդորոս Տրպատունին մեկնում է Խոսրով արքայի մոտ, հուսալով, որ արժանանալու է նրա հովանավորությանը: Սակայն արքան, անշուշտ, ոչ առանց Մորիկի գիտության, կապանքների մեջ դնելով այդ նախարարին, ուղարկում է Թրակիա՝ «զի մեռցի»*[48]*: Մորիկն իր հերթին հրամայում է զորաժողով կատարել կայսրությանն անցած հայկական գավառներում և □դարձեալ ժողովել ... զիշխանս նախարարացն ... և անցուցանել զամենեսեան յաշխարհն Թրակացւոց ընդդէմ թշնամւոյն□: Թրակիա նետված նախարարների զորամասերի հրամանատար է կարգվում Մուշեղ Մամիկոնյանը: Նախարարների զորագնդերը, հասնելով Դանուբ գետի ափերը, ջախջախում են հակառակորդ ուժերին, բայց հետագա մարտերում պարտվում են, տալով զոհեր՝ «բազմութիւն նախարարացն և զաւրացն Հայաստանեայց»: Ընդ որում՝ գերվում և գլխատվում է նաև Մուշեղ Մամիկոնյանը*[49]*: Այդպիսով՝ մեկ անգամ ևս իրականանում է մորիկյան նենգ քաղաքականությունը՝ ջլատելով հայ նախարարների զորությունը: Պետական անկարողությամբ, սահմանափակությամբ աչքի ընկնող այս կայսրը*[50]*, չբավարարվելով այդքանով, ձեռնամուխ եղավ հայերի դավանափոխմանը՝ հրամայելով «քարոզել զժողով Քաղկեդոնի յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի, և միաւորել հաղորդութեամբ ընդ զաւր իւր»*[51]*: Այդպիսով հայկական եկեղեցիները, նախա-*

---

[46] *Նույն տեղում, էջ 88:*

[47] *Նույն տեղում:*

[48] *Նույն տեղում, էջ 89–90:*

[49] *Նույն տեղում, էջ 90–91:*

[50] Н. П и г у л е в с к а я. Византия и Иран на рубеже VI и VII веков. М.–Л., 1946, с. 62, 68.

[51] *Ս ե բ ե ո ս, էջ 91:*

բարները պետք է հաղորդվեին կայսրության զորքերի հետ, անշուշտ, հրաժարվելու դեպքում վերջիններս ուժի էին դիմելու: Այդ ծրագրի իրագործումը դյուրացնելու համար շարունակվում է հայ նախարարներին նրանց ռազմուժով երկրից դուրս հանելու քաղաքականությունը: Կայսրը հրամայում է ժողովել «յաշխարհէն Հայոց...
արս ընտիրս սպառազէնս ԲՌ (2000) հեծելոց»՝ և Սահակ Մամիկոնյանի գլխավորությամբ ուղարկել Թրակիա՝ պատերազմելու: Նախարարները Սմբատ Բագրատունու գլխավորությամբ միաբանվում և մտադրվում են «ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր», որպեսզի իրենց ևս չվիճակվի «մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»[52]*:*

Հայ նախարարներն իրենց զորուժով անհրաժեշտ էին նաև Խոսրով II արքային, որը նախկինի պես նրանց դուրս է հանում Հայաստանից՝ նետելով իր թշնամիների դեմ: Խոսրովն իր թագավորության 6-րդ տարում (596 թ.) արքունի դուռ է հրավիրում նախարարներին: Մեկնողների մեջ հիշատակվում են Գագիկ և Մամակ (Մամիկ) Մամիկոնյանները, Պապ Բագրատունին, Վարդան Արծրունին, Ստեփանոս Սյունին, Խոսրով Վահևունին, Կոտիտ Ամատունին «և այլք ընդ նոսա ի նախարարաց», որոնց նա պահում է արքունի դռանը, իսկ նրանց զորաբաժինները տեղաբաշխում «ի Սպահան աշխարհի»[53]*՝ երկյուղելով ապստամբներին նրանց զինակցությունից: Խոսրով Փարվեզը կարողանում է հայերի զորամիավորումները նույնպես նետել ապստամբ ցեղերի դեմ և պարտության մատնել նրանց մի մասին*[54]*: Դրանից հետո թեև արքան սիրաշահում է հայ նախարարներին, նույնիսկ թույլ է տալիս վերադառնալ հայրենիք, սակայն նկատի առնելով նրանց պատկառելի զորուժի առկայությունը՝ շարունակում է անվստահություն տածել նրանց նկատմամբ: Այդ մղումով նա արյաց դռան թշնամիների դեմ հաջողությամբ պատերազմած Սմբատ Բագրատունուն (այլ է նախորդից), որը 593–600 թվականներին վարում էր Հայաստանի մարզպանի պաշտոնը, տեղափոխում է Վրկան երկիր և կարգում մարզպան: Խոսրով II հրամանով Սմբատը հայոց զորքով հնազանդեցնում է ապստամբ ցեղերին*[55]*: Սմբատի հայկական զորագնդերն ուղարկվում են նաև Խոսրով Փարվեզի դեմ հաջողությամբ պատերազմը շարունակող մյուս խռովարարների դեմ՝ տալով բազմաթիվ զոհեր*[56]*: Հայկական զորամասերը պատերազմում են նաև Տաբարստան մարզում դիմադրությունը շարունակող ապստամբների դեմ՝ պարտության մատնելով նրանց*[57]*:*

---

[52] *Նույն տեղում, էջ 92: Մորիկը, տեղեկանալով նախարարների մտահղացման մասին, ձերբակալում է նրանցից ութին, այդ թվում՝ Սմբատ Բագրատունուն, որին, իբրև մահապարտի, նետել է տալիս բացօթյա կրկես՝ վայրի գազանների հետ մենամարտելու, ապա աքսորում է Աֆրիկա՝ իբրև զորքի ստորին պաշտոնյա (նույն տեղում): Հույն պատմիչը Մորիկին բարձրացնելու միտումով գրում է, որ իբր նա արգելել է գազանների առջև գցել Սմբատին (տե՛ս* Ֆեոֆիլակտ Սիմոկատտա. *Նշվ. աշխ., էջ 80–81):*

[53] *Սեբեոս, էջ 94:*

[54] *Նույն տեղում, էջ 95:*

[55] *Նույն տեղում, էջ 96:*

[56] *Նույն տեղում, էջ 98:*

[57] *Նույն տեղում, էջ 99:*

Թեև Խոսրով II իր թագավորության 18-րդ տարում (609 թ.) Սմբատ Բագրատունուն թույլ է տալիս մեկնել հայրենիք՝ պատանդ պահելով նրա որդի Վարազտիրոցին, սակայն մեկ տարի հետո արքան վերստին Սմբատին իր զորագնդերով նետում է քուշանների դեմ պատերազմելու: Եվ Սմբատի գլխավորությամբ ռազմադաշտ են ուղարկվում «իշխանք նախարարացն Հայոց ... իւրաքանչիւր գնդաւ և դրաւշու»՝ Արծրունի, Տայեցի, Ապահունի, Գողթնի, Դիմաքսյան, Տրպատունի «և այլք նախարարացն»[58]: Իհարկե, հայ նախարարների ճնշող մեծամասնությունը մնում էր հայրենի եզերքում՝ պաշտպանելով երկիրը հնարավոր հարձակումներից:

Արյաց արքան թեև Հայաստանը դիտում էր որպես իրեն ենթակա երկիր, բայց նրա էթնիկական միատարրությունը, նախարարական համակարգը և զորուժի առկայությունը շարունակում էին անվստահություն ներշնչել Խոսրով Փարվեզին: Այդ անվստահությունն ավելի էր խորանում հայերի և Բյուզանդիայի նույնակրոն լինելու իրողությամբ: Սմբատ Բագրատունու գլխավորած հայոց զորուժի դուրս հանումը երկրից նրանց պահում էր յուրատեսակ պատանդի վիճակում: Այդուամենայնիվ, այդ զորքը հաջողությամբ պատերազմում էր քուշանների դեմ և հաղթանակներ տանում: Բայց վերջիններս Միբիրի խանության (որից կախյալ վիճակում էին) օգնությամբ պարտության են մատնում հայոց զորքին, ապա ներխուժում Պարսկաստան, ասպատակելով «մինչև ի սահմանս Ռէյ և Ասպահան գաւառի, և աւերեալ զերկիրն ամենայն»[59]: Սասանյանների համար այդ ծանր պահին Սմբատ Բագրատունին համալրելով ուժերը՝ խիզախ հարձակմամբ պարտության է մատնում քուշաններին՝ հասնելով նրանց Բալխ քաղաք[60]: Այդ հաղթանակից հետո ևս Սմբատն ու իր զորագնդերը պահվում են Սասանյանների արքունիքում՝ թշնամիներից այն պաշտպանելու նպատակով: Սմբատն այլևս չի տեսնում իր հայրենիքը և 617 թ. վախճանվում է Սպահանում[61]:

Մխիթարական չէր նաև Մորիկ կայսեր վիճակը՝ Բալկաններում ավարական ցեղերի և սլավոնների հարաժամյա հարձակումների պատճառով: Ուստի նա, հավատարիմ մնալով հայ նախարարների հանդեպ իր որդեգրած նենգ քաղաքականությանը, շարունակում է Թրակիա նետել հայկական նոր զորամասեր: Հայ նախարարներից ոմանք ջանում էին չկատարել կայսեր հրամանը: Երբ վերջինս Ատատ Խորխոռունուն փորձում է հայկական զորաբաժնով ուղարկել Թրակիա, հայ նախարարը և իր ջոկատը կտրուկ հրաժարվում են կատարել նրա հրամանը, նույնիսկ հետ են մղում իրենց վրա հարձակվող բյուզանդական զորքին և հաջողությամբ հասնում պարսկական բաժին: Բայց Խոսրով արքան նույնպես նրանց թույլ չի տալիս վերադառնալ հայրենիք և նշանակում է արքունի ռոճիկ[62], անշուշտ, պետության թշնամիների դեմ օգտագործելու ակնկալությամբ: Հաջորդ՝ 602 թ., վերոհիշյալ Խորխոռունի իշխանը, չհանդուրժելով սասանյան արքայի վերաբերմունքը, ծառանում է նրա դեմ,

---

[58] *Նույն տեղում, էջ 101:*

[59] *Նույն տեղում, էջ 102:*

[60] *Նույն տեղում, էջ 103:*

[61] *Նույն տեղում, էջ 104: Սմբատի աճյունը տեղափոխվում է Հայաստան և ամփոփվում Դարոյնքի տոհմական դամբանատեղում:*

[62] *Ս ե բ է ո ս, էջ 105:*

ուստի վերջինիս հրամանով մահվան է դատապարտվում: Նույն ճակատագրին է արժանանում նաև նրա տոհմակից Թեոդորոսը, որը նույն թվականին վերսկսված պարսկա-բյուզանդական պատերազմի ժամանակ գլխավորելով հայկական զորամասերը, մարտնչում էր պարսից զորքի դեմ՝ ամրանալով Ծաղկոտն գավառի Անգղ ամրոցում: Եվ քանի որ պարսից զորապետի առաջարկով Թեոդորոսը նրան է հանձնում ամրոցը, ուստի Խոսրով II սկզբում բարեհաճ վերաբերմունք է ցուցաբերում հայ նախարարի նկատմամբ՝ նշանակելով նաև ռոճիկ, սակայն, ի վերջո, չվստահելով նրան, գլխատել է տալիս[63]*: Այդուամենայնիվ, պարսից արքային չէր հաջողվում վերացնել Հայաստանի ներքին ինքնուրույնությունը: Կայսրից և սասանյան արքայից հայ նախարարների կախվածությունը հաճախ դառնում էր ձևական: Եվ այն փաստը, որ պարսից տիրակալն ինքն էր հաճախ կարիք զգում հայ նախարարների զորակցության, ավելի էր մեծացնում վերջիններիս քաղաքական ազդեցությունը, հաճախ նույնիսկ կախման մեջ դնելով արյաց տիրակալին: Ինչպես հայտնի է, Պարսկաստանին բաժին ընկած Հայաստանը քառակի անգամ ավելի մեծ էր, քան բյուզանդական հատվածը: Հայ նախարարների հիմնական զանգվածը, կենտրոնացած լինելով պարսից բաժնում, իր ռազմուժով դառնում էր ազգային ինքնուրույնության հզոր կռվան, որի շնորհիվ Հայաստանը պահպանում էր իր ներքին ինքնուրույնությունը՝ մնալով աննվաճ: Պատերազմների ընթացքում պարսից բաժնի հայ նախարարները պարտավոր էին պաշտպանել հայրենի երկիրը, քանի որ պատերազմական գործողությունները հիմնականում տեղի էին ունենում այնտեղ: Հերակլ կայսեր գահակալման երկրորդ տարում՝ 603 թ., պարսից զորքերը գրավում են Կեսարիան*[64]*: Այդ զորքերի կազմում էին նաև հայկական զորամասեր, որոնցից մեկի զորագլուխ Վասակ Արծրունին, որ «սնեալ էր ի մէջ» պարսից, կամենում է անցնել բյուզանդացիների կողմը: Նրա արարքը չի հանդուրժվում, և Խոսրով II-ը մահավճիռ է կայացնում Վասակի նկատմամբ*[65]*:*

614 թ. մարտի 15-ին Հերակլ կայսրը նոր արշավանք է ձեռնարկում Պարսկաստանի դեմ: Նրա զորքը «մայրաքաղաքից դուրս գալով փութանակի Հայաստան հասավ... Կայսրը ապրիլ ամսի քսանին ներխուժեց Պարսկաստան»[66]*: Թեոփանես Խոստովանողի վկայությամբ, երբ այդ զորքերը մտան Հայաստանի պարսկական բաժին, հայերից շատերը միացան պարսից զորքերին, բայց ձմռանը գերադասեցին դադար առնել իրենց տներում*[67]*: Իհարկե, հայ նախարարները Հերակլի զորքի առաջխաղացման պայմաններում կողմնորոշվում էին դեպի հավատակից տերությունը, որի զորքերի կազմում ևս կային հայեր: Նույն ամսի վերջին, ըստ Թեոփանեսի, Պարսից զորքում ծառայող հայերից ոմանք գիշերով եկան կայսեր մոտ և հայտնեցին, թե Խոսրով արքան «փղերով և անձնական զորքով» բանակել է Դաստակերտ քաղաքից (որտեղ էր նրա ար-*

---

[63] *Նույն տեղում, էջ 110:*

[64] *Թեոփանես Խոստովանող, թարգմանութ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 13:*

[65] *Ս ե բ է ո ս, էջ 112:*

[66] *Թեոփանես Խոստովանող, էջ 21:*

[67] *Նույն տեղում:*

քունիքը) հինգ մղոն հեռավորության վրա ընկած մի վայրում[68]: Բյուզանդական զորքը հարձակման է անցնում, ուստի պարսից արքան զորքով Դաստակերտից աճապարում է Տիզբոն[69]: Սակայն նույն թվականին պարսից զորքը գրավում է Երուսաղեմը, գերում այն խաչափայտը, որի վրա խաչվել էր Քրիստոսը: 619 թ. պարսից զորքերը գրավում են նաև Եգիպտոսը, Ասորիքը և Կիլիկիան: Կայսրը, հաշտություն կնքելով ավարական խաքանի հետ, վերակազմում է բանակը և 623 թ. սկզբին անձամբ զորքը շարժում է դեպի Հայաստան, գարնանը գրավում Դվինը՝ հաղթանակ տանելով պարսիկների դեմ[70]: 624 թ. մարտական գործողություններն ընթանում են Հայաստանում[71]: Սակայն Ապահունիքում հաղթանակ տարած Հերակլը դադարեցնում է հարձակումները, զորքը ետ քաշելով Պոնտոսի կողմերը, քանի որ պարսից զորքերը 626 թ. արդեն պաշարել էին Քաղկեդոն քաղաքը[72]: Թեոփանեսի վկայությամբ՝ այդ ծանր պահին Վահան զորապետը (հավանաբար, Մամիկոնյան) «փոքրաթիվ, բայց ընտիր» զորամասով նույն թվականի դեկտեմբերի 1-ին ջախջախում է պարսկական մի զորամասի[73]: Կայսրության մայրաքաղաքի վրա հարձակումներ էին գործում նաև ավարները: Հերակլի զորքը հետ է շպրտում նրանց՝ խազարների զորակցությամբ, ապա 627 թ. ներխուժում է Պարսկաստան, Նինվեի ավերակների մոտ ջախջախում Խոսրով II զորքերին և գրավում նրա նստավայր Դաստակերտը: Հաջորդ տարի Խոսրովը գահընկեց է արվում և գլխատվում: Նրան հաջորդած Կավատ II (Շիրոյե) 629 թ. Հերակլի հետ կնքված հաշտությամբ կայսրությանն է վերադարձնում Հայաստանի բյուզանդական մասը, նաև՝ Միջագետքը, Ասորիքն ու Եգիպտոսը[74]:

Հերակլի զորքերին մեծ օգնություն էին ցույց տալիս նաև հայ նախարարների զորամասերը, ինչպես և Փոքր Ասիայի քրիստոնյա ազգությունները: Հերակլը չէր կարող հաշվի չառնել նրանց շահերը: Կայսեր հրամանով վերակառուցվում են Երուսաղեմի եկեղեցիները՝ հոգևոր հաղորդակցություն պահպանելով Հայոց եկեղեցու հետ:

629 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև կնքված նոր պայմանագրից հետո, երբ կողմերը վերականգնում են նախկին սահմանները, Հայաստանի բյուզանդական մասում զորապետ է նշանակավում Մժեժ Գնունի նախարարը: Վերջինս Հերակլի դեմ դավադրության մեղադրանքով Դավիթ Սահառունի նախարարին դնել է տալիս կապանքների մեջ և ուղարկում կայսեր մոտ: Սակայն Սահառունին, ճանապարհին քանդելով կապանքները, սպանում է իրեն տանող զինվորներին և իր կողմը գրավելով «զզաւրս Հայոց», պարտության է մատնում Մժեժ Գնունուն ու նրա զորակից Գնել Գնունուն՝ ստանձնելով Հայաստանի բյուզանդական մասի զորքերի հրամանատարությունը[75]: Հերակլ կայսրը, հաշվի առնելով հայոց զորքի, իր բաժնի հայ նախարարների կամքը,

---

[68] *Նույն տեղում, էջ 32:*
[69] *Նույն տեղում, էջ 32–33:*
[70] История Византии, т. I. М., 1967, с. 365.
[71] G. O s t r o g o r s k y. Geschichte des byzantinschen States. München, 1963, S. 85.
[72] Ф. У с п е н с к и й. История Византийской империи, т. I. СПб., 1913, с. 689.
[73] *Թեոփանես Խոստովանող, էջ 30:*
[74] История Византии, т. I, с. 365–366.
[75] *Ս ե բ է ո ս, էջ 133:*

635 թ. Դավիթ Սահառունուն նշանակում է Հայաստանի բյուզանդական բաժնի զորքերի հրամանատար՝ շնորհելով նաև կյուրապաղատի աստիճան[76]: - Փաստորեն, կայսրը համոզվում է, որ հնարավոր չէ հայ նախարարների ինքնավար իրավունքների վերացումը, անշուշտ, հաշվի առնելով նրանց ուժն ու ազդեցությունը:

Նույն համոզմունքին էր նաև սասանյան թագավոր Կավատ II, որը 629 թ. Հայաստանի մարզպան է նշանակում ոչ թե պարսկի, այլ Վարազտիրոց Բագրատունուն՝ Սմբատի որդուն: Վերջինիս դեմ, սակայն, դավ է նյութվում՝ նրան և իր շուրջը համախմբված նախարարներին Հայաստանից ու քաղաքական ասպարեզից հեռացնելու համար: Կռահելով արյաց դռան մտադրությունը՝ Վարազտիրոցը փրկվում է ձերբակալությունից և իր մերձակիցների հետ անցնում Տարոն գավառ, իր շուրջն է համախմբում «զզաւրս իւր» և կողմնորոշվելով Միջագետքում գտնվող Հերակլ կայսրի կողմը, խոստանում, որ զինակցելու է նրան, պայմանով, եթե կայսրը իրեն չհեռացնի Հայաստանից: Թեև Հերակլը խոստանում է կատարել Վարազտիրոցի խնդրանքը, սակայն հաշվի առնելով նրա շուրջը համախմբված նախարարների զորուժն ու ինքնուրույնությունը, ինչպես և կայսրության հյուսիսաֆրիկյան տիրույթները պաշտպանելու անհրաժեշտությունը, որոշ ժամանակ անցնելուց հետո Վարազտիրոցին ու նրա զորամասը նետում է Աֆրիկա[77]: Հերակլը, անշուշտ, չէր կամենում զորացնել բյուզանդական բաժնի Հայաստանը՝ նրան զրկելով ինքնուրույնանալու հույսերից: Բայց նա կամենում էր կայսրության սահմանները պաշտպանել ոչ միայն իրեն հավատարիմ հույն զորայինների, այլև հայ ազատանու զորամասերով:

630-ական թվականներին Հայաստանի պարսկական բաժնի նախարարները պահպանում են իրենց իշխանությունները, հողատիրույթները և շարունակում պարսկամետ դիրքորոշումը: Սասանյանների գերիշխանության վերջնափուլում, երբ արաբական զորագնդերը գրոհում էին Տիզբոն մայրաքաղաքը, նրանց դիմակայում են նաև Մուշեղ Մամիկոնյանը՝ երեք հազար զորականներով և Սյունյաց Գրիգոր իշխանը՝ հազար հոգով, տալով զոհեր: Մարտում ընկնում են նաև Մուշեղ զորապետն ու Գրիգոր իշխանը[78]: Հայաստանի պաշտպանության մասին հոգ է տանում նրա պարսկական բաժնի սպարապետ Թեոդորոս Ռշտունին: Հայաստանի վրա արաբների արշավանքից առաջ, նա որպես երկրի փաստական կառավարիչ՝ «կազմէր զզաւրս իւրոյ կողմանն հանապազ»: Բայց նախարարների մի մասը գերադասում է չդիմադրել արաբներին, անշուշտ, հաշվի առնելով նրանց հզորությունը: Այդ նախարարները, ինչ-

---

[76] *Նույն տեղում: Հայ նախարարների, Հայոց եկեղեցու զորությամբ էր թելադրված Երուսաղեմի պատրիարքական տեղապահ («երիցապետ») Մոդեստոսի (632–634) դիմումը Հայոց Կոմիտաս կաթողիկոսին՝ Երուսաղեմի եկեղեցիներին և բնակչությանը նյութապես օգնելու խնդրանքով (նույն տեղում, էջ 117–118): Կաթողիկոսը հուսադրող թղթով արձագանքում է Մոդեստոսին (նույն տեղում, էջ 118–120): Հավանաբար, Մոդեստոսը հիշյալ դիմումը կատարել է իր տեղապահությունից առաջ, քանի որ Կոմիտասն աթոռակալել է 615–628 թթ.:*

[77] *Նույն տեղում, էջ 133:*

[78] *Նույն տեղում, էջ 137:*

պես վկայում է ժամանակակից Սեբեոս պատմագիրը, «անմիաբան լեալ ... մեկնեցան ի միմեանց»[79]*:*

Այսպիսով՝ Հայոց Արշակունիների թագավորության վերացումից հետո Հայաստանում պահպանվում է պետականությունը՝ նախարարական իշխանությունների ձևով: Սասանյանների օրոք Հայաստանը հիմնականում մնում է որպես ինքնավար իրավունքներով ու հոգևոր անկախությամբ օժտված երկիր: Սասանյան տիրակալների բռնություններն ու խտրական քաղաքականությունը հայ նախարարների հանդեպ ի զորու չեղան խարխլել Հայոց նախարարական համակարգի հինավուրց ու բնաձուն, երկրում խոր արմատներ ձգած հիմքերը: Հայ ժողովուրդը կարողացավ պահպանել քրիստոնեական հավատը, պետական կենսունակությունը և կենարար ու ստեղծագործ ոգին:

АРМЯНСКАЯ ГОСУДАРСТВЕННОСТЬ ПОСЛЕ ПАДЕНИЯ ЦАРСТВА АРШАКУНИ
(Половина V в. – 630-е годы)

ВРЕЖ ВАРДАНЯН

Резюме

После падения Армянского царства Аршакуни (428 г.) в Армении сохранялась государственность в лице нахарарских княжеств с местными социальными институтами. Основой мощи нахараров являлось крупное землевладение. Историограф Егише (V в.) пишет, что после свержения последнего армянского царя Аршакуни – Арташеса, власть перешла к нахарарам Армении. Римские императоры и цари Сасанидского Ирана стремились лишить Армению автономных прав и военной силы, превратив ее в одну из провинций своих государств. Однако это им не удавалось. Для ослабления нахараров и военной мощи Армении они часто использовали армянских нахараров с их дружинами, бросая их против внешних врагов своих государств. Восстания армянского народа против Сасанидского государства способствовали мощи и единению армянского народа, сохранению христианской веры и национальной культуры. Длительные войны, противоборство с Сасанидами отягчали положение армянского народа, однако не могли поколебить его жизнеспособные силы. Армянская церковь и нахарары выступали защитниками армянской веры, направляли деятельность церковных соборов, где решались общественно-политические и религиозные вопросы.

[79] *Նույն տեղում, էջ 138:*

THE ARMENIAN STATE AFTER THE FALLING OF THE KINGDOM OF ARSHAKUNI
(The half of the 5th c. – the 630s)

VREZH VARDANYAN

S u m m a r y

After the falling of the Armenian kingdom of Arshakuni (428) in the person of nakharars the kingdom with the local social institutions was preserved. The main power for nakharars became great landowning. The historiographer Yeghishe (5th c.) when speaking about Artashes (the last king of Arshakuni) told that the nakharars took power in their hands. The Roman emperors and the kings of Sasanian Iran looked forward to depriving Armenia of autonomous rights and military forces and turning it to one of their provinces. For weakening the strength of nakharars and miltitary forces they sent the Armenian detachments for fighting against their enemies. The Armenians rebelled against Sasanian Iran and promoted for strengthening the national unity. The Armenian church and the nakharars fought for saving the Christian faith and the national culture.